տներն այնքան փոքր են, որ աւելի թռչունի բուների են նմանում, քան մարդկանց բնակարանի։ Ցները երկյարկանի, շատ պարզ եւ կոպիտ ճարտարապետութեամբ շինուած են ոչ միայն տափարակի վրայ, այլ նաեւ ժայռերի, սարի լանջերի վրայ. եկեղեցիները նոյնպէս շատ փոքր են, դռները այնքան փոքր, որ մտնելու համար պէտք է սողալ։ Մի քանի տներ շինուած են այնպիսի ժայռերի վրայ, որտեղ այծեամները միայն կարող են մանդալ։

Շարդէն ասպետը, որ այցելեց Ջուղան 1673 թ. Ապրիլի 13ին, ուրեմն Ջուղայի աւերուելուց 68 տարի յետոյ՝ իր պատմութեան Բ. Հատորին մէջ (էջ 303, 1811) այսպէս է խօսում։

"Երասխի եզերում դանուում է Հին-Ջուղան (որին աշխարհագիր Հաճի Խալֆան, կոչուած եւս Քեաթիբ Զելեբի՝ իր "Ջհան-Նըմայ" գրքին մէջ՝ Ջուլֆաթ անունն է տալիս,) աւերեալ քաղաք, որ մի քանի հեղինակներ կարծում են լինել այն, որ հներն կոչում էին Արրիամէն։ Իրաւունք ունին Հին կոչելու, որովհետեւ բոլորովին աւերեալ եւ կործանեալ է։ Այդտեղ այլեւս ոչինչ ճանաչել չէ կարելի, բաց ի իր ունեցած մեծութիւնը. նա շինուած էր մի լերան զառիվայրի վրայ, դետի երկարութեամբ եւ նրա եզերին։ Մուտքերը, որոնք բնականաբար դժուարանցանելի եւ ամուր են, պահպանուած էին շատ բերդերով։ Քաղաքն ունէր 4000 տուն, ինչպէս ասում են Հայերը, սակայն աւերակներին նայելով կէսից աւելի չպէտք է ունենար. տների մեծ մասն ծակեր եւ դետնափորներ են, սարերի մէջ այրեր, աւելի յարմար հօտերի քան թէ մարդկանց բնակարան լինելու։ Ես չեմ